361
Ա-49

16368

ԱՂՔԱՏՆԵՐԻՆ ԵՒ ԶՈՒՆԵՒՈՐՆԵՐԻՆ

ԽՆԱՄՈՂ

Գանձակի Հայոց Ընկերութիւն

Հ.Ս.Խ.Հ. Հանրային Գրադարան
R.S.F.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Гор. Елисаветполь
ТИПОГРАФІЯ Л. АГАЯНЦА.
1916 г.

361
Կ-49
Ա.ա
370
Զ018-ԿԱ

ՀԱՄԱՁԱՅՆ ՈՐՈՇՄԱՆ ԳԱՆՁԱԿԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀՏԵՐՆԻ 1916 ԹՎԻՒ ՓԵՏՐՈՒԱՐԻ 12-Ի, ՍՈՑՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ Է ԵՒ ՄՈՒԹՈՒԱԾ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՌԷԿԻՍՏՐԸ № 27-ՈՎ 26 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1916 ԹՎԻ. ԳԱՆՁԱԿ ՔԱՂԱՔ.

ԻՍԿԱԿԱՆԻ ՎԵՐԱՑ ՍՏԱՄԱՇԳՐԵԼ Է
Կ. Գ. ԳԱՆՁԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ
ԿՈՎԼԷԼԵՈՎ

1004
15411

ԱՂՔԱՏՆԵՐԻՆ ԵՒ ՉՈՒՆԵՒՈՐՆԵՐԻՆ ԽՆԱՄՈՂ ԳԱՆՁԱԿԻ ՀԱՅՈՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

§ 1.

Աղքատներին խնամելու և չունևորներին նպաստելու համար հիմնւում է „Աղքատներին և չունևորներին խնամող Գանձակի հայոց ընկերութիւնը“։ Նորակազմ ընկերութեան գործունէութեան շրջանը տարածւում է Գանձակ քաղաքի և Գանձակի գաւառի վերայ։

§ 2.

Ընկերութիւնը գտնւում է ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի հովանաւորութեան ներքոյ։

2010

§ 3.

Ընկերութեան նպատակն է. ա. իւր միջոցների համեմատ, բանալ ապաստարաններ աղքատների համար. բ. չունևորներին և որբերին հասցնել օգնութիւն. գ օժանդակել տեղական հայոց բարեգործական ընկերութիւններին, նոյնպէս և տեղացի հայ ուսանողներին, աշակերտներին ու աշակերտուհիներին. Դ. համաճարակների ժամանակ չունևորներին օգնութիւն ցոյց տալ։

Նկատողութիւն ա. Խնամք և օժանդակութիւն տրւում են դրամով, անդով, դեղօրայքով, հագուստեղէնով և այլ նպաստներով։

Նկատողութիւն բ. Ընդհանուր աղետների ժամանակ, նպաստ տրւում է նաև այլազգիներին։

§ 4.

Աղքատներին բժշկական օգնութիւն հասցնելու համար, ընկերութիւնը ունի կամ իւր մշտական բժիշկը կամ, անհրաժեշտութեան դէպքում, հրաւիրում է մասնաւոր բժիշկներ։

§ 5.

Ընկերութիւնը բաղկանում է ՊԱՏՈՒԱՒՈՐ, ՄՇՏԱԿԱՆ և ԻՍԿԱԿԱՆ անդամներից։ Ընկերութեան ՊԱՏՈՒԱՒՈՐ անդամներ համարւում են նոքա, որոնք ընկերութեան մատուցել են աչքի ընկնող ծառայութիւններ։ Նոքա ընտրւում են վարչութեան առաջարկութեամբ անդամների ընդհանուր ժողովից։ ՄՇՏԱԿԱՆ անդամներ համարւում են նոքա, որոնք նուիրում են ընկերութեան օգտին միանուագ 50 ռուբլուց ոչ պակաս։ ԻՍԿԱԿԱՆ անդամներ համարւում են նոքա, որոնք իւրաքանչիւր տարի վճարում են ընկերութեան երեքական ռուբլի։ 7-րդ կէտում յիշուած անձերից մշտական և իսկական անդամներ ընտրելու իրաւունքը, վերոյիշեալ վճարները հատուցանելու պայմանով, վերապահւում է թէ ընդհանուր ժողովին և թէ վարչութեան։

§ 6.

Ընկերութեան այն իսկական անդամները, որոնք երեք ամսուայ ընթացքում չեն տուել իրենց անդամավճարները, համարւում են ընկերութիւնից հեռացած։

§ 7.

Ընկերութեան անդամներ կարող են լինել բոլոր չափահասները երկու սեռից էլ, բացի տարբրական և միջնակարգ դպրոցներում սովորողներից։

§ 8.

Ընկերութեան միջոցները կազմւում են. ա. անդամավճարներից, բ. շարժական և անշարժ կայքերի նուիրաբերութիւններից, գ. դրամագլխի տոկոսներից և դ, այն հանգանակութիւններից, որոնք ցոյց են տրւած 23 յօդուածում։

§ 9.

Ընկերութեան դրամագլուխները երկու տեսակ են. ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ և ՍՈՎՈՐԱԿԱՆ։ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ դրամագլուխը բաղկանում է հիմնական դրամագլխից և այն նուիրատուութիւններից, որոնք կլինեն անձեռնմխելի պահելու պայմանով. իսկ ՍՈՎՈՐԱԿԱՆ դրամագլուխը կազմւում է անդամավճարներից, անձեռնմխելի դրամագլխի տոկոսներից և կայքերի ու հանգանակութիւնների եկամուտներից։

§ 10.

Անդամների ընդհանուր ժողովի վճռի համաձայն, եկամուտների, անդամավճարների և այլ հանգանակութիւնների հինգից մինչև տասը տոկոսը բարձւում է և միացնւում հիմնական դրամագլխին։

§ 11.

Անձեռնմխելի դրամագլուխը ընկերութեան անունով պահւում է պետական բանկում կամ մասնաւոր բանկերում աճեցնելու համար։

§ 12.

Ընկերութեան գործերը կառավարում է Վարչութիւնը, որը գտնւում է Գանձակ քաղաքում։

§ 13.

Վարչութիւնը կազմւում է երկու սեռի եօթը անդամներից ու երեք անձնափոխանորդներից, որոնք ընտրւում են մի տարի ժամանակով ընդհանուր ժողովում։ Վարչութեան մի կամ մի քանի անդամների հեռանալու դէպքում, նոցա փոխարինում են անձնափոխանորդները. այնուամենայնիւ

ընդհանուր ժողովից է կախված հեռացող-ների փոխարէն վարչութեան նոր անդամ-ներ ընտրել։ Երբ Վարչութեան հեռացող անդամներին փոխարինում են առաջուց ընտրուած անձնափոխանորդները անհրա-ժեշտութեան դէպքում, նոր անձնափոխա-նորդներ ընտրւում են նոյնպէս ընդհա-նուր ժողովում։

§ 14.

Վարչութիւնը ընտրում է իւր միջից նախագահ Վարչութեան, նախագահի օգնա-կան, գանձապահ և քարտուղար։

§ 15.

Վարչութեան նախագահը հրաւիրում է ժողովներ և ղեկավարում նրանք. վերահս-կում է ընկերութեան գործերին. ստորագը-րում է ընթացիկ թղթերը քարտուղարի և գանձապահի հետ միասին։

§ 16.

Քարտուղարը կառավարում է ընկե-րութեան գիւանը կազմում է Վարչութեան ժողովների և որոշումների արձանագրու-թիւնները. պահում է անդամների ցուցակը

և ընկերութեան կնիքը ու մատեանները. նոյնպէս կազմում է նախահաշիւը և տա-րեկան հաշուետուութիւնը։

§ 17.

Գանձապահը ընդունում է անդամա-վճարները, նուիրատուութիւնները և հանգա-նակութիւնները. պահում է մուտքի և ելքի ժապաւինեալ մատեանները. կատարում է բոլոր դրամական գործողութիւնները, հա-մաձայն վարչութեան և ընդհանուր ժողովի որոշումների. նոյնպէս կազմում է իւրա-քանչիւր տարուայ հաշիւը։

§ 18.

Վարչութեան նիստերը լինում են ըստ չափու հարկաւորութեան կամ շաբաթուայ որոշ օրերը, համաձայն իւր որոշման և գոր-ծերը վճռւում են վարչութեան ներկայ գտնուող անդամների ձայների հասարակ մեծամասնութեամբ։

Ձայների հաւասարութեան դէպքում, նախագահողի ձայնը գերակշռում է։

§ 19.

Նիստերի օրերը նշանակում է վարչու-թիւնը, տակայն, հարկաւորութեան դէպ-

քում, նախագահը հրաւիրում է արտակարգ նիստ։

§ 20.

Վարչութեան նիստերը համարւում են կայացած և նորա որոշումները օրինական, երբ նիստին ներկայ են, բացի նախագահից կամ նորա օգնականից, նաև երեք անդամներ Վարչութիւնից։

§ 21.

Վարչութեան նախագահի հիւանդութեան կամ Գանձակ քաղաքից ժամանակաւոր բացակայութեան ժամանակ, նորան փոխարինում է նախագահի օգնականը. իսկ վարչութեան անդամի հիւանդութեան կամ Գանձակ քաղաքից ժամանակաւոր բացակայութեան ժամանակ, նախագահը հրաւիրում է անձնափոխանորդներից ըստ աւագութեան։

§ 22.

Վարչութեան անդամը, որը, ոչ յարգելի պատճառներով, իրար վերայ չի յաճախել հինգ նիստեր, համարւում է Վարչութեան կազմից հեռացած և, նախագահի հրաւէրով, նորան փոխարինում է անձնափոխանորդը։

§ 23.

Ընկերութեան Վարչութեան պարտականութիւններն են. ա, հոգալ ընկերութեան միջոցները աւելացնելու մասին, որի համար, պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ, Գանձակ քաղաքի հայոց եկեղեցիներում ազգերին հանգանակութիւններ է կատարում, կազմակերպում է երեկոյթներ, համերգներ, ներկայացումներ, դբօսանքներ, գրականական երեկոյթներ, վիճակախաղ և այլն. բ, պահպանել և կառավարել ընկերութեան կայքը ու հիմնարկութիւնները. գ, ընկերութեան անունով յարաբերութեան մէջ մտնել պատշաճաւոր իշխանութիւնների և հիմնարկութիւնների հետ. դ, ներկայացնել դատական պահանջներ ու զանգատներ ընկերութեան գործերին վերաբերեալ, ուր այդ հարկաւոր լինի. ե, ձեռք բերել անշարժ կամ շարժական կայքեր, գնելով կամ նուէր ընդունելով. զ, կապել պայմանագրեր. է, գրամագլուխները դնել բանքերում կամ ստանալ գրանք. ը, կազմել ապագայ ծախսերի նախահաշիւը և տարուայ վերջին տարեհաշուի հետ միասին ներկայացնել ընդհանուր ժողովին ի

հաստատութիւն. թ, տեղեկութիւններ ժողովել չքաւորների և կարիքաւորների մասին և նոցա օգնութիւն հասցնելու համար հարկաւոր կարգադրութիւններ անել իւր անդամների և հաւատարապէս վստահութիւն վայելող ուրիշ անձանց միջոցով. ժ, ի կատար ածել ընդհանուր ժողովի որոշումները և առհասարակ վարել ընկերութեան գործերը։

§ 24.

Վարչութիւնը հրաւիրում է Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը Գանձակ քաղաքում տարեկան երկու անգամ. մինչև մարտի 15-ը անցած տարուայ հաշուետուութիւնը քննելու և հաստատելու համար և մինչև հոկտեմբերի 15 գալիք տարուայ նախահաշիւը քննելու. Վարչութեան և վերատեսուչ յանձնաժողովի անդամներ ընտրելու և վարչութեան առաջարկութիւնները նայելու համար, որի մասին ընդհանուր ժողով նշանակուած օրից երկու շաբաթ առաջ յայտարարւում է տեղական կամ այլ քաղաքների լրագիրների մէջ. նոյնպէս կարող է այդ յայտարարուել և այլ միջոցներով։

§ 25.

Ընդհանուր ժողովը կայացած է համարւում, երբ մասնակցում է Գանձակում գտնուող բոլոր անդամների թուի $^1/_3$ մասից ոչ պակասը. հակառակ դէպքում, չը-կայացած ընդհանուր ժողովի փոխարէն հրաւիրւում է նոր-երկրորդ ժողով, որը օրինական է համարւում անկախ ներկայ գտնուող անդամների թուից։

§ 26.

Ընդհանուր ժողովը բաց է անում Վարչութեան Նախագահը, որի առաջարկութեամբ ընկերութեան ներկայ եղող անդամները իրենց միջից ընտրում են նախագահ ժողովը կառավարելու և քարտուղար՝ արձանագրութիւններ կազմելու համար։

Նկատողութիւն. Վարչութեան անդամները չեն կարող ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար լինել, և ոչ էլ վերատեսուչ յանձնաժողովի անդամներ։

§ 27.

Ընդհանուր ժողովում ընկերութեան անձամբ ներկայ եղող բոլոր անդամները ձայնի իրաւունք ունեն։

§ 28.

Ընդհանուր ժողովում գործերը վճռուում են ձայների մեծամասնութեամբ։

§ 29.

Ընդհանուր ժողովում քննուում են հաշուետուութիւնը և նախահաշիւը. խորհրդածութեան առարկայ են լինում և վճռուում վարչութեան առաջարկած հարցերը. նոյնպէս կատարուում են վարչութեան, վերատեսուչ յանձնաժողովի և ընկերութեան անդամների ընտրութիւններ։

§ 30.

Վերատեսուչ յանձնաժողովը բաղկացած է ընկերութեան երեք անդամից և ընտրուում է մի տարի ժամանակով։

§ 31.

Վերատեսուչ յանձնաժողովը ամեն մի ժամանակ կարող է տուգել վարչութեան դրամական հաշուեմատեանները և նորա դրամարկղը և իւր զեկուցումը անել վարչութեան նախագահին։

§ 32.

Վարչութիւնը հրաւիրում է և արտակարգ ընդհանուր ժողովներ. Ա. երբ գտնում է, որ այդ անհրաժեշտ է. Բ. երբ ընկերութեան անդամներից տասը հոգուց ոչ պակաս կտան գրաւոր յայտարարութիւններ վարչութեան այդ մասին, մատնանշելով այն հարցերը, որոնց լուծման համար վարչութիւնը իրաւասու չէ. և Գ. երբ այդ գրաւոր կպահանջէ վերատեսուչ յանձնաժողովը։

Նկատողութիւն. Արտակարգ ընդհանուր ժողովներում քննուում են միայն այն հարցերը, որոնց լուծման համար նոքա հրաւիրուած են։

§ 33.

Ընկերութեան տարեհաշիւը, ժողովից հաստատուելուց յետոյ, հրատարակուում է լրագիրներում կամ առանձին գրքոյկով վարչութեան կողմից։

§ 34.

Այս կանոնադրութիւնը կարող է փոփոխուել կամ լրացնուել միայն ընդհանուր ժողովի որոշմամբ, որը ներկայացնուում է

ընկերութիւնների և միութիւնների գործերին վերաբերեալ նահանգական Ատեանին, (Губернское по дѣламъ объ обществахъ и союзахъ Присутствіе) համապատասխան մինիստրութիւն յարուցանելով կանոնադրութեան փոփոխման կամ լրացման մասին։

§ 35.

Ընկերութիւնը ունի վարչութեան կողմից վաւերացրուած ժապաւենեալ մատեաններ և կնիք այս մակագրութեամբ. „Գանձակի շրջանի ազգատախնամ ընկերութիւն։"

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна

§ 36.

Եթէ ընկերութիւնը որ և է պատճառով դադարեցնի իւր գոյութիւնը, նորա կանխիկ դրամագլուխները և առհասարակ նորա բոլոր կարողութիւնը ընդհանուր ժողովի որոշմամբը անցնում են ի սեպհականութիւն Գանձակի հայոց եկեղեցիներին։

Այս հարցը լուծելու համար պահանջւում է ընդհանուր ժողովում ներկայ եղող ընկերութեան անդամների ոչ պակաս քան երկու երրորդական մասի համաձայնութիւնը։

2013
<< Ազգային գրադարան
NL0049197
16365